



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Վարչական գործ ԸԻԴ N 0172/05/13թ.
Նախագահող դատավոր՝ Լ.Ավանեսյան
Դատավորներ՝ Հ.Աբրահամյան
Կ.Սաղյան

Վարչական գործ ԸԻԴ N 0172/05/13թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ

23 հոկտեմբերի 2014թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝
վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր Ի.Կարապետյանի
դատավորներ՝ Գ.Արզումանյանի
Ա.Հայրապետյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Վիգեն Ռոբիկի Բաղդասարյանի ընդդեմ Ստեփանակերտի քաղաքապետարանի և ԼՂՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ Ստեփանակերտի քաղաքապետի որոշումը մասնակի անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ Ա. Մկրտումյանի անվամբ իրավունքի գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին վարչական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2014 թվականի օգոստոսի 28-ի որոշման դեմ հայցվոր Վիգեն Ռոբիկի Բաղդասարյանի ներկայացուցիչներ Նորվարդ Սամվելի Բաղդասարյանի և Ռաֆիկ Գեորգիի Մարտիրոսյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Վիզեն Ռոբիկի Բաղդասարյանը, հայց հարուցելով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի /վարչական/ դատարան /այսուհետ՝ նաև Վարչական դատարան/ ընդդեմ Ստեփանակերտի քաղաքապետարանի և ԼՂՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, խնդրել է մասնակիորեն /առաջին հարկի մասով/ անվավեր ճանաչել Ստեփանակերտի քաղաքապետի առ 12.10.2011թ. թիվ 1788Ա որոշումը և վերացնել «այն հետևանքները, որոնք առաջացել են նշված վարչական ակտի հետևանքով, այն է՝ մասնակի /նույն մասով/ անվավեր ճանաչել իրավունքների գրանցման միասնական 1-9 մատյանի 117850 համարի տակ կատարված Ա.Մկրտումյանի սեփականության իրավունքի գրանցումը»: Հայցադիմումում միաժամանակ միջնորդվել է վերականգնել հայց ներկայացնելու՝ բաց թողնված դատավարական ժամկետը:

Վարչական դատարանի 2013 թվականի օգոստոսի 20-ի որոշմամբ դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բավարարվել է, հայցադիմումն ընդունվել և հարուցվել է վարչական գործ: Վարչական դատարանի 2014 թվականի փետրվարի 20-ի որոշմամբ Անդրեյ Սեմյոնի Մկրտումյանը գործով ներգրավվել է որպես երրորդ անձ:

Վարչական դատարանը 2014 թվականի մայիսի 27-ի վճռով հայցը բավարարել է մասնակիորեն. վճռվել է Ստեփանակերտի քաղաքապետարանի 2011 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1788Ա որոշումը մասնակի՝ Ս.Դավիթ 56/59 հասցեով ավտոտնակի 39.53 քառ. մետր մակերեսով առաջին հարկն Անդրեյ Սեմյոնի Մկրտումյանին՝ կառուցապատման իրավունքով ձեռք բերելու առաջարկության մասով, ճանաչել անվավեր: ԼՂՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 1-9 մատյանի թիվ 117850 համարի ներքո 2011 թվականի դեկտեմբերի 15-ին կատարված Անդրեյ Սեմյոնի Մկրտումյանի իրավունքի գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու մասով հայցը մերժվել է:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ 2014 թվականի օգոստոսի 28-ի որոշմամբ Ստեփանակերտի քաղաքապետարանի, երրորդ անձ Ա.Մկրտումյանի և նրա ներկայացուցիչ Ա.Մադաթյանի վերաքննիչ բողոքները բավարարվել են. բեկանվել և փոփոխվել է Վարչական դատարանի 2014 թվականի մայիսի 27-ի վճիռը, Վիզեն Ռոբիկի Բաղդասարյանի հայցը՝ մերժվել:

Վարչական դատարանի նշված վճռի դեմ 2014 թվականի հուլիսի 16-ին վերաքննիչ բողոք էր ներկայացրել նաև հայցվոր Վ.Բաղդասարյանի ներկայացուցիչ Ն. Բաղդասարյանը, որը Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հուլիսի 18-ի որոշմամբ վերադարձվել է՝ վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժելու հիմքով:

Վերաքննիչ դատարանի 2014 թվականի օգոստոսի 28-ի որոշման դեմ 2014 թվականի սեպտեմբերի 25-ին վճռաբեկ բողոք են բերել հայցվորի ներկայացուցիչներ Ն.Բաղդասարյանը և Ռ.Մարտիրոսյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ Սահմանադրության 33-րդ, 34-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանել ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-24-րդ, 113-րդ հոդվածները և Ստեփանակերտի քաղաքապետի 2002 թվականի հունվարի 4-ի որոշումը, չի կիրառել իրավահարաբերությունը նշված ժամանակաշրջանում կարգավորող ԼՂՀ հողային օրենսգրքի 13-րդ, 14-րդ, 23-րդ հոդվածները, որոնք ենթակա էին կիրառման, կիրառել է Ստեփանակերտի քաղաքապետի 2002 թվականի հունվարի 4-ի թիվ 1 որոշումը, որը չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Ստեփանակերտի քաղաքային խորհրդի 1987 թվականի ապրիլի 29-ի թիվ 14/193 որոշմամբ սույն գործով հայցվոր Վիգեն Ռոբիկի Բաղդասարյանին թույլատրվել է քաղաքի 13-րդ կվարտալում տեղադրել ավտոտնակ: Այդ նպատակով Վ.Բաղդասարյանը կատարել է որոշակի աշխատանքներ, մասնավորապես, տասնյակ մեքենաներով հող լցնելով, հարթեցրել է մեծ թեքության վրա գտնվող տարածքը, ձեռք է բերել երեսուներե հատ բետոնե բլոկներ, որոնցով հիմնել է ավտոտնակի պատերը, տեղադրվել է դարպաս՝ գրեթե ավարտին հասցնելով ավտոտնակի կառուցումը, իսկ լրիվությամբ չի ավարտվել՝ պատերազմական գործողությունների, ինչպես նաև հայցվորի ընտանիքում տեղի ունեցած դժբախտ դեպքերի պատճառով: Պատերազմի ավարտից հետո հայցվորն ընտանիքի անդամների հետ որոշ ժամանակով բացակայել է ԼՂՀ-ից: Այդ ընթացքում նրանց հարևան, սույն գործով երրորդ անձ Անդրեյ Մկրտումյանն ինքնակամորեն ծածկել է ավտոտնակը և, փաստորեն, օգտագործելով իրենց ավտոտնակի կտուրը, ինչպես նաև հարակից տարածքը, երկրորդ հարկում կառուցել է շինություն: 1997 թվականին, երբ Վիգեն Բաղդասարյանի ծնողները վերադարձել են ու բացատրություն պահանջել Անդրեյ Մկրտումյանից, վերջինս նրանց հանգստացրել ու հավաստիացրել է, որ վատ բան չի արել, առաջին հարկը կմնա հայցվորի ընտանիքին, իսկ երկրորդ հարկը՝ իրեն: Մինչև 2010 թվականը ավտոտնակն օգտագործվել է հայցվորի ընտանիքի կողմից, դրանից հետո՝ դժբախտության պատճառով ԼՂՀ-ից մեկնելու պատճառով, ավտոտնակը թողնվել է Ա.Մկրտումյանի ժամանակավոր օգտագործման ներքո, սակայն շարունակել են ավտոտնակի սպասարկման ծառայությունների դիմաց սահմանված մուծումները՝ ընդհուպ մինչև 2014 թվականը: Հետագայում, երբ հայցվորի ընտանիքի անդամները ձեռնամուխ են եղել ավտոտնակի նկատմամբ իրենց իրավունքները ձևակերպելու աշխատանքներին, պարզվել է, որ ինչպես հայցվորի ավտոտնակի, այնպես էլ Անդրեյ Մկրտումյանի կողմից կառուցված-

ավելացված մյուս շինությունների նկատմամբ Ստեփանակերտի քաղաքապետարանը 2011 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1788 որոշմամբ ճանաչել է Անդրեյ Մկրտումյանի՝ իբրև կառույցն իրականացրած անձի, նախապատվության կարգով ձեռք բերման իրավունքը:

Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով Ստեփանակերտի քաղաքապետի 2002 թվականի հունվարի 4-ի թիվ 1 որոշումն այն մասին, որ Ստեփանակերտ քաղաքում շենքերի, շինությունների /ներառյալ անհատական տների/ կառուցման նպատակով մինչև 1999 թվականի հունվարի 1-ը հատկացված և նպատակային չօգտագործված հողատարածքների վերաբերյալ քաղաքային գործադիր իշխանության մարմինների կողմից ընդունված որոշումները համարվել են ուժը կորցրած, եզրահանգել է, որ Ստեփանակերտի քաղաքային խորհրդի 1987 թվականի ապրիլի 29-ին թիվ 14/193 որոշմամբ Վիգեն Ռոբիկի Բաղդասարյանին 13-րդ կվարտալում ավտոտնակի տեղադրման թույլտվության գործընթացը կառուցապատմամբ փոխարինելու պատճառով ծանրաբեռնված հողամասը դարձել է նպատակային չօգտագործված հողատարածք, հետևաբար, Ստեփանակերտի քաղաքապետի 2002 թվականի հունվարի 4-ին թիվ 1 որոշման համաձայն, այն կորցրել է իրավաբանական ուժը: Սակայն ընդհանուր բնույթ կրող Ստեփանակերտի քաղաքապետի 2002 թվականի հունվարի 4-ի թիվ 1 որոշումը կոնկրետ դեպքում Վ.Բաղդասարյանի հողօգտագործման իրավունքի դադարման հիմք հանդիսանալ չի կարող: Ստեփանակերտի քաղաքապետարանը հողամասը պետական սեփականություն դարձնելու իրավասությամբ օժտված չէ: Իրավահարաբերության ժամանակ գործող ԼՂՀ հողային օրենսգրքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հողամասը որպես սեփականություն տրամադրելը մեկ այլ հողասեփականատիրոջ կամ հողօգտագործողի կատարվում է նշված հողամասի նկատմամբ սեփականատիրոջ կամ օգտագործողի իրավունքն օրենքով սահմանված կարգով դադարելուց հետո: Նույն օրենսգրքի 23-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ հողի օգտագործման և վարձակալության իրավունքի դադարման հիմքերն են, երբ հողամասն օգտագործվում է ոչ նպատակային նշանակությամբ և երբ պարբերաբար չեն վճարվում հարկերը կամ վարձակալական վճարը: Այսինքն՝ Վիգեն Բաղդասարյանի, որպես հողօտագործողի իրավունքն օրենքով սահմանված կարգով դադարելուց հետո միայն վիճելի հողատարածքը կարող էր տրամադրվել Ա.Մկրտումյանին: Մինչդեռ Վիգեն Բաղդասարյանի հողօգտագործման իրավունքն օրենքով սահմանված կարգով դադարած չի եղել ու խախտվել է հողօգտագործման նրա իրավունքը: Ավելին՝ հողամասը Վիգեն Բաղդասարյանն օգտագործել է նպատակային նշանակությամբ՝ կառուցել է ավտոտնակ: Եվ եթե անգամ այն որևէ հիմքով համարվի ինքնակամ կառույց, ապա օրենքի և այլ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ այն դառնում է օրինական ու առաջարկվում կառուցողին, սակայն Ստեփանակերտի քաղաքապետարանը, փաստորեն, ճանաչել է Ա.Մկրտումյանի իրավունքը ոչ միայն Վ.Բաղդասարյանին հատկացված հողամասի,

այլև ամբողջ շինության նկատմամբ՝ հաշվի չառնելով, որ դրա մի մասը կառուցվել է Վ.Բաղդասարյանի կողմից:

Վարչական դատարանում հարցաքննված մեկ տասնյակից ավելի վկաներ հաստատել են հայցվորի կողմից շինարարական աշխատանքներ կատարելու փաստը: Մասնավորապես, նրանք ցուցմունք են տվել, որ հայցվորն ու նրա ընտանիքի անդամներն իրականացրել են հողահարթեցման խոշոր աշխատանքներ, ձեռք են բերել ու տեղադրել 35-40 ցեմենտբետոնե բլոկներ՝ կառուցելով ավտոտնակի պատերը, 1997 թվականին ավտոտնակում տեղադրել են դարպաս, ինչը նույնպես նշանակում է, որ առանց կողային պատերի համապատասխան բարձրացման դարպաս չի կարող տեղադրվել: Վերաքննիչ դատարանը, սակայն, առանց որևէ պատճառաբանության անտեսել է հարցաքննված վկաների ցուցմունքները, որոշման մեջ փաստորեն անդրադարձել է միայն երեք վկաների ցուցմունքներին, դրանք էլ զնահատել է միակողմանի՝ հոգուտ պատասխանող կողմի:

Անհիմն և անօրինական է Վերաքննիչ դատարանի հետևությունը նաև այն մասին, որ գումարի դիմաց Վ.Բաղդասարյանը փաստորեն հրաժարվել է կիսակառույց ավտոտնակի նկատմամբ իր «ենթադրյալ իրավունքից», մանավանդ որ առկա չէ այդ կապակցությամբ թույլատրելի որևէ ապացույց՝ առուվաճառքի պայմանագիր: Բացի դրանից, նշված փաստի հաստատումն ընդհանրապես դուրս է սույն գործով ապացուցման առարկայի շրջանակներից: Փաստորեն Վերաքննիչ դատարանը նշված եզրահանգումը կատարել է դատավարական կարգի խախտմամբ՝ օրենքով չթույլատրված ապացուցման միջոցների օգնությամբ՝ մի իրավահարաբերության նկատմամբ, որի վերաբերյալ դատական քննություն ընդհանրապես չի իրականացվել:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի օգոստոսի 28-ի որոշումը և օրինական ուժ տալ Վարչական դատարանի դատական ակտին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

1/ Ժողովրդական դեպուտատների Ստեփանակերտի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի՝ «Անհատական մեքենաների համար մետաղյա ավտոտնակների կառուցման և տեղադրման մասին» 1987 թվականի ապրիլի 29-ի 14/193 որոշման համաձայն՝ Վիգեն Ռոբիկի Բաղդասարյանին թույլատրվել է Ստեփանակերտի 13-րդ կվարտալում տեղադրել ավտոտնակ՝ համաձայն ուրվագծի /գ.թ. 44/:

2/ «Ս.Դավիթ փողոցի թիվ 56 շենքի շրջակայքում ինքնակամ կառուցված շինության նկատմամբ պետության սեփականության իրավունքի ճանաչման և կառուցապատման իրավունքով տրամադրման մասին» Ստեփանակերտի քաղաքապետի 2011 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1788 որոշման առաջին կետով ճանաչվել է «պետության սեփականության իրավունքը Ս.Դավիթ 56 շենքի

շրջակայքում ինքնակամ կառուցված» 102.15 քառ.մ մակերեսով ավտոտնակի նկատմամբ՝ հասցեն համարելով Ս.Դավիթ 56/59: Որոշման երկրորդ կետով որոշվել է «տվյալ կառույցը իրականացրած անձին՝ Անդրեյ Մկրտումյանին, տալ գրավոր առաջարկություն նախապատվության կարգով կառուցապատման իրավունքով 5 տարի ժամկետով կառույցը և դրա տակ գտնվող 39,53 քառ.մ մակերեսով հողամասը ձեռք բերելու մասին» /գ.թ 37/:

3/ 2011 թվականի դեկտեմբերի 15-ին ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 1-9 մատյանի թիվ 117850 համարի ներքո գրանցվել է կառուցապատման Անդրեյ Մեմյոնի Մկրտումյանի իրավունքը: «Հողամասի տվյալները» բաժնում նշված է՝ նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, օգտագործման նպատակը՝ հասարակական կառուցապատման, հողամասի չափը՝ 0,0040 հա: «Շենքի տվյալները» բաժնում նշված է՝ նպատակային նշանակությունը՝ հասարակական, օգտագործման նպատակը՝ ավտոտնակ, մակերեսը՝ 86,64 քառ.մ. /գ.թ. 29-30/:

4/ Վարչական դատարանը, հայցը բավարարելով մասնակիորեն, պատճառաբանել է, որ վիճարկվող ակտով խախտվել է հայցվորի իրավունքը՝ «նույն հիմքով ձեռք բերելու իրավունքներ իր կողմից հիմնված գույքի, ընդհանուրից իրեն հասանելիք մասի նկատմամբ»: Պատճառաբանելով, որ «երրորդ անձի օգտին վարչարարության իրականացման միակ հիմք հանդիսացող փաստաթուղթը՝ Ստեփանակերտ քաղաքի Ս.Դավիթ փողոցի թիվ 56 շենքի բնակիչների կազմած ակտը, չի բովանդակում երրորդ անձի կողմից վիճելի գույքը կառուցելու մասին նշումներ, այլ ներառում է պայմաններ Ստեփանակերտ քաղաքի Ս.Դավիթ փողոցի 56/59 հասցեով ավտոտնակն Անդրեյ Մեմյոնի Մկրտումյանի կողմից օգտագործելու մասին, որ Ստեփանակերտի քաղաքապետի 2011 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1788Ա որոշման կայացման հիմք ծառայած փաստաթղթերը Ստեփանակերտ քաղաքի Ս.Դավիթ փողոցի 56/59 հասցեով ավտոտնակի կառուցման աշխատանքների հեղինակի մասին փաստեր չեն պարունակում», Վարչական դատարանն եզրահանգել է, որ խախտվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի պահանջն այն մասին, որ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

5/ Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ 2000 թվականին Վիգեն Բաղդասարյանի և Անդրեյ Մկրտումյանի միջև բանավոր պայմանավորվածությամբ Վիգեն Բաղդասարյանը վաճառել, իսկ Անդրեյ Մկրտումյանը գնել է ավտոտնակը, բլոկներն ու դարպասը, իսկ հայցվորը «նշված գործողություններով, փաստորեն, հրաժարվել է կիսակառույց ավտոտնակի նկատմամբ իր ունեցած ենթադրյալ իրավունքից՝ հօգուտ սույն գործով երրորդ անձ Անդրեյ Մկրտումյանի», եզրահանգել է, որ «գործով ձեռք չի բերվել որևէ ապացույց այն մասին, որ վիճարկվող գրանցումն

ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, կամ կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ ներկայացված փաստաթղթերից ակնհայտ լինի, որ ըստ էության պետք է կատարվեր այլ գրանցում»:

Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով Ստեփանակերտի քաղաքապետի 2002 թվականի հունվարի 4-ի թիվ 1 որոշումը, համաձայն որի՝ Ստեփանակերտ քաղաքում շենքերի, շինությունների /ներառյալ անհատական տների/ կառուցման նպատակով մինչև 1999 թվականի հունվարի 1-ը հատկացված և նպատակային չօգտագործված հողատարածքների վերաբերյալ քաղաքային գործադիր իշխանության մարմինների կողմից ընդունված որոշումները համարվում են ուժը կորցրած, նաև եզրահանգել է, որ «ժողովրդական դեպուտատների Ստեփանակերտի քաղաքային խորհրդի 1987 թվականի ապրիլի 29-ի թիվ 14/193 որոշմամբ Վիգեն Ռոբիկի Բաղդասարյանին 13-րդ կվարտալում ավտոտնակի տեղադրման թույլտվության գործընթացը կառուցապատմամբ փոխարինելու պատճառով, ծանրաբեռնված հողամասը դարձել է նպատակային չօգտագործված հողատարածք, հետևաբար, Ստեփանակերտի քաղաքապետի 2002 թվականի հունվարի 4-ի որոշման համաձայն, այն կորցրել է իրավաբանական ուժը»:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.14-րդ հոդվածի համաձայն՝ վճռաբեկության կարգով գործի քննության ժամանակ Գերագույն դատարանը գործով կայացված դատական ակտը վերանայում է վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Քննելով վճռաբեկ բողոքը նշված սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է մասնակիորեն՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործով Վարչական դատարանը, Վ.Բաղդասարյանի հայցը բավարարելով մասնակիորեն, պատճառաբանել է, որ վիճարկվող ակտով խախտվել է հայցվորի իրավունքը՝ «նույն հիմքով ձեռք բերելու իրավունքներ իր կողմից հիմնված գույքի, ընդհանուրից իրեն հասանելիք մասի նկատմամբ», որ Ա.Մկրտումյանի օգտին վարչարարության իրականացման հիմքում դրված Ստեփանակերտ քաղաքի Ս.Դավիթ փողոցի թիվ 56 շենքի բնակիչների կազմած ակտն ընդամենը բովանդակում է Ա.Մկրտումյանի կողմից ավտոտնակն օգտագործելու մասին տվյալներ, որ Ստեփանակերտի քաղաքապետի 2011 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1788Ա որոշման կայացման հիմք ծառայած փաստաթղթերով չի հաստատվում ավտոտնակը Ա.Մկրտումյանի կողմից կառուցելու հանգամանքը ու եզրահանգել է, որ տվյալ դեպքում խախտվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի պահանջն այն մասին, որ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի,

լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ 2000 թվականին Վ. Բաղդասարյանի և Ա.Մկրտումյանի միջև բանավոր պայմանավորվածությամբ Վ. Բաղդասարյանը վաճառել, իսկ Ա.Մկրտումյանը գնել է ավտոտնակը, բլոկներն ու դարպասը, որ հայցվորը «նշված գործողություններով, փաստորեն, հրաժարվել է կիսակառույց ավտոտնակի նկատմամբ իր ունեցած ենթադրյալ իրավունքից՝ հօգուտ սույն գործով երրորդ անձ Անդրեյ Մկրտումյանի», եզրահանգել է, որ գործով ձեռք չի բերվել որևէ ապացույց այն մասին, որ վիճարկվող գրանցումն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, կամ կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ ներկայացված փաստաթղթերից ակնհայտ լինի, որ ըստ էության պետք է կատարվեր այլ գրանցում: Վերաքննիչ դատարանը, նշելով, որ Ստեփանակերտի քաղաքապետի 2002 թվականի հունվարի 4-ի թիվ 1 որոշմամբ Ստեփանակերտ քաղաքում շենքերի, շինությունների /ներառյալ անհատական տների/ կառուցման նպատակով մինչև 1999 թվականի հունվարի 1-ը հատկացված և նպատակային չօգտագործված հողատարածքների վերաբերյալ քաղաքային գործադիր իշխանության մարմինների կողմից ընդունված որոշումները համարվել են ուժը կորցրած, նաև եզրահանգել է, որ «ժողովրդական դեպուտատների Ստեփանակերտի քաղաքային խորհրդի 1987 թվականի ապրիլի 29-ի թիվ 14/193 որոշմամբ Վիգեն Ռոբիկի Բաղդասարյանին 13-րդ կվարտալում ավտոտնակի տեղադրման թույլտվության գործընթացը կառուցապատմամբ փոխարինելու պատճառով, ծանրաբեռնված հողամասը դարձել է նպատակային չօգտագործված հողատարածք, հետևաբար, Ստեփանակերտի քաղաքապետի 2002 թվականի հունվարի 4-ի որոշման համաձայն, այն կորցրել է իրավաբանական ուժը»:

Սույն գործով իրավահարաբերության ծագման պահին /1987թ./ գործող հողային օրենսդրությամբ հողը համարվում էր պետական սեփականություն և այն քաղաքացիներին կարող էր տրվել անժամկետ կամ ժամանակավոր օգտագործման: Քաղաքների հողերից հողամասեր հատկացնում էին ժողովրդական դեպուտատների քաղաքային սովետների գործադիր կոմիտեները: Ընդ որում, հողամասի օգտագործման իրավունքը կարող էր դադարել, եթե քաղաքացին կամովին հրաժարվել է հողամասն օգտագործելուց, լրացել է հատկացված հողամասի օգտագործման ժամկետը, երկու տարի շարունակ չի օգտագործել հողամասը կամ օգտագործել է ոչ այն նպատակին համապատասխան, ինչի համար հատկացված է եղել: Օգտագործվող հողամասը մեկ այլ հողօգտագործողի էր տրվում միայն սովյալ հողամասը օրենքով սահմանված կարգով վերցվելուց հետո /1971թ. Հողային օրենսգրքի 8-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 33-րդ հոդվածներ/: Հողօգտագործման իրավունքի ձեռք բերման և դադարման՝ ըստ էության նույն սկզբունքներն է սահմանել նաև հետագայում ընդունված հողային օրենսդրությունը:

Ինչպես հետևում է ժողովրդական դեպուտատների Ստեփանակերտի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի՝ «Անհատական մեքենաների համար մետաղյա ավտոտնակների կառուցման և տեղադրման մասին» 1987 թվականի ապրիլի 29-ի 14/193 որոշումից, սույն գործով հայցվոր Վիգեն Ռոբիկի Բաղդասարյանին թույլատրվել է Ստեփանակերտի 13-րդ կվարտալում տեղադրել ավտոտնակ՝ համաձայն ուրվագծի, իսկ Ստեփանակերտի քաղաքապետի 2011 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1788Ա որոշմամբ ճանաչվել է պետության սեփականության իրավունքը Ս.Դավիթ 56 շենքի շրջակայքում գտնվող ինքնակամ կառույցի, այդ թվում՝ Վ. Բաղդասարյանին հատկացված հողամասում կառուցված ավտոտնակի նկատմամբ ու ճանաչվել է Ա.Մկրտումյանի՝ իբրև կառույցն իրականացրած անձի նախապատվության իրավունքը՝ այդ կառույցը ու դրա տակ գտնվող հողամասը ձեռք բերելու համար:

Վերաբերելի, թույլատրելի ու բավարար ապացույցներ այն մասին, որ օրենքով սահմանված կարգով դադարել է Վիգեն Բաղդասարյանի հողօտագործման իրավունքը, որ ավտոտնակը վաճառվել է, որ ավտոտնակը չի կառուցվել Վիգեն Բաղդասարյանի կողմից, այլ կառուցվել է Անդրեյ Մկրտումյանը կողմից, որ վիճարկվող որոշումն իրավաչափ է, Ստեփանակերտի քաղաքապետարանը չի ներկայացրել ու գործով չեն պարզվել:

Հետևաբար՝ անհիմն է վիճարկվող որոշման իրավաչափության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումը: Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի արժանացրել գործում առկա ապացույցները, վիճարկվող վարչական ակտը չի գնահատել վարչարարության հիմնարար ու մյուս սկզբունքների լույսի ներքո, միջոցներ չի ձեռնարկել գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու համար: Ավելին՝ վարչական մարմնի փոխարեն ձեռնամուխ է եղել վիճարկվող որոշման համար նոր հիմքերի որոնմանը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝ ա/օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ մեկնաբանման հետևանքով, բ/կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:

ԼԴՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը, իսկ 2-րդ մասի համաձայն՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող

ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է պետության կամ համայնքի սեփականությունը, անկախ նրանից, թե ով է այն կառուցել:

ԼՂՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 444 որոշմամբ հաստատված Կարգի 47-րդ կետով սահմանված է, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա իրականացված ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքի սեփականության իրավունքի ճանաչումից հետո դրանք կարող են տրամադրվել վարձակալության կամ կառուցապատման իրավունքով կառույցն իրականացրած անձանց՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ժամկետներով:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնե /ex officio/, իսկ 3-րդ մասի համաձայն՝ դատարանը վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով իրավասու է, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես, պահանջելու վարչական վարույթի նյութեր, տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու կողմերին անձամբ ներկայանալ դատական նիստի:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն՝

1. Վերաբերելի է այն ապացույցը, որն ավելի կամ պակաս հավանական է դարձնում վեճը լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլիներ առանց այդ ապացույցի: Ոչ վերաբերելի ապացույցն անթույլատրելի է:

2. Գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

3. Օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն ապացուցողական ուժ չունեն և չեն կարող դրվել դատական ակտի հիմքում:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս՝

1) գնահատում է ապացույցները.

2) որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել.

3) որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, ինչպես նաև այն իրավական ակտերը, որոնք պետք է կիրառվեն տվյալ գործով, սակայն օրենքին հակասելու պատճառով կիրառման ենթակա չեն.

4) որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Այսպիսով, Գերագույն դատարանը հիմնավոր է համարում վճռաբեկ բողոքի հիմքը և հիմնավորումները՝ գտնելով, որ գործով թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, որոնք հանգեցրել են գործի սխալ լուծման:

Գերագույն դատարանը, միևնույն ժամանակ, գտնում է, որ սույն գործի փաստերը բավարար չեն վեճն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու համար, ուստի տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթները՝ մասնակիորեն բավարարել վճռաբեկ բողոքը, ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի դատական ակտը և գործն ուղարկել Վարչական դատարան՝ նոր քննության՝ գործի փաստերն ի պաշտոնե պարզելու ու համապատասխան իրավական գնահատական տալու համար:

Վարչական դատարանին անհրաժեշտ է պահանջել սույն վեճին վերաբերող՝ ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակը որոշող հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 7-ի արձանագրությունը և նյութերը, ավտոտնակի ու մյուս շինությունների նկատմամբ սեփականության իրավունքի վկայականը /գործում դրանք առկա չեն/:

Ինչպես հետևում է ներկայացված հայցադիմումից, հայցվորը վիճարկել է ավտոտնակի առաջին հարկի մասով Ստեփանակերտի քաղաքապետի 2011 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1788Ա որոշման առաջին և երկրորդ կետերը, մինչդեռ Վարչական դատարանը որոշման երկրորդ կետն ընդհանրապես քննարկման առարկա չի դարձրել ու այդ մասով դատական ակտ չի կայացրել: Նոր քննության ընթացքում անհրաժեշտ է անդրադառնալ նաև այդ հարցին:

Անհրաժեշտ է նաև լրիվությամբ ապահովել հայցվորի դատավարական իրավունքները, քանի որ ինչպես հետևում է գործի նյութերից, բոլոր ծանուցումները ու դատական ակտերը նրան ուղարկվել են սխալ հասցեով ու տեղ չեն հասել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցվոր Վիգեն Ռոբիկի Բաղդասարյանի ներկայացուցիչներ Նորվարդ Սամվելի Բաղդասարյանի և Ռաֆիկ Գեորգիի Մարտիրոսյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2014 թվականի օգոստոսի 28-ի որոշումը և գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Գ.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ